ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի նոյեմբերի 26-ի N 4-Լ

Լսելով և քննարկելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի գործունեության վերաբերյալ հարցը (զեկուցող `ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյան)`

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Ուսանողական խորհրդի գործունեության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:
2. Ուսանողական խորհրդի ուշադրությունը հրավիրել հետևյալ աշխատանքների վրա.
   - Ուսանողական խորհրդի կողմից իրականացվող ծրագրերին և միջոցառումներին ներգրավել առավել շատ թվով ուսանողներ:
   - Ուսանողական խորհրդի աշխատանքների համար հիմք ընդունել ուսանողների սոցիալական խնդիրներն ու պահանջները:
   - Կատարել ընդհանրական վերլուծություն ուսանողներին հուզող խնդիրների վերաբերյալ:
   - Ընդլայնել կապերը արտերկրյա ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների հետ, ինչպես նաև առավելապես նպաստել ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացմանը:
   - Ակտիվորեն մասնակցություն ունենալ համալսարանում ուսանողների համալրման գործընթացում, կազմակերպել հանդիպումներ, սեմինար քննարկումներ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ